

«Մաքսային վարչարարություն» մագիստրոսական ծրագիր

Մագիստրոսական ծրագիրը կիրականացվի

- ◆ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և մաքսային համակարգի այլ գործատուների հետ համատեղ
- ◆ 1,5 տարի ժամկետով
- ◆ Ոլորտի լավագույն մասնագետների ներգրավմամբ
- ◆ Նորագույն դասավանդման մեթոդների կիրառմամբ
- ◆ Շաբաթական երեք անգամ
- ◆ Երեկոյան ժամը 18:00-ից հետո
- ◆ Գործատու կազմակերպություններում փորձառության անցկացմամբ

Ընդհանուր տեղեկություն

«Մաքսային վարչարարություն» մագիստրոսական նոր կրթական ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը և ՀՀ արտաքին առևտրային հարաբերությունների կարգավորման առաջնահերթությունները:

«Մաքսային վարչարարություն» ծրագրի մշակման հիմքում դրվել է կիրառական գիտելիքի և գործնական հմտությունների փոխանցման գաղափարախոսությունը: Ծրագիրն իրականացվելու է նորագույն դասավանդման մեթոդների կիրառմամբ և մոդուլային սզբունքով՝ յուրաքանչյուր մոդուլի ավարտից հետո գործատու կազմակերպություններում մասնագիտական փորձառության անցկացման հնարավորությամբ, ինչը թույլ կտա մոդուլների շրջանակներում ձեռք բերված գիտելիքն ամրապնդել գործնական հմտություններով:

Կրթական ծրագրի դիմորդներն ուսումնառության ընթացքում ձեռք կբերեն արտաքին առևտրի քաղաքականության մշակման, միջազգային և տարածաշրջանային մաքսային կարգավորման սկզբունքների տեղայնացման, բեռների առանձին տեսակների մաքսային կարգավորման, ապրանքահոսքերի լոգիստիկ կառավարման, մատակարարման շղթաների նախագծման և այլ մասնագիտական հմտություններ, կկարողանան գնահատել մաքսային քաղաքականության փոփոխությունների ազդեցությունը տնտեսության շահի դիտակետից:

Դասավանդման գործընթացում ներգրավված են ՀՀ արտաքին առևտրի քաղաքականության մշակման և մաքսային համակարգի լավագույն մասնագետները:

Ծրագրի ավարտին կշնորհվի «Տնտեսագիտության մագիստրոսի» որակավորում:

«Մաքսային վարչարարություն» մասնագիտացման շրջանավարտները կկարողանան աշխատել ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեում, ՀՀ մաքսային ծառայությունում, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում՝ ներգրավվելով երկրի

արտաքին տնտեսական և մասնավորապես՝ մաքսային քաղաքականության մշակման գործընթացներում, ինչպես նաև՝ մաքսատներում, արտահանման և ներմուծման գործառնություններ իրականացնող մասնավոր ընկերություններում, միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող տրանսպորտային կազմակերպություններում, լոգիստիկ կենտրոններում: Շրջանավարտները կկարողանան աշխատել ոչ միայն ՀՀ-ում, այլև ԵԱՏՄ անդամ մյուս երկրներում գործող մաքսային համակարգի կառույցներում:

Ուսման վճարը մեկ տարվա համար 600.000 ՀՀ դրամ է:

Մասնագիտության նկարագիր

Մաքսային համակարգում իրականացվող բարեփոխումներն իրենց բնույթով շարունակական են՝ պայմանավորված ոլորտի դինամիկ զարգացման և տնտեսական առաջընթացի արագ տեմպերին մաքսային համակարգի ինտեգրման անհրաժեշտությամբ: Մաքսային քաղաքականությունը՝ որպես արտաքին առևտրի կարգավորման առանցքային ուղղություն, մեծապես կախված է միջազգային առևտրի զարգացման միտումների փոփոխությունից և միջազգային ու տարածաշրջանային մակարդակներում ՀՀ ստանձնած պարտավորություններից: Այս առումով մաքսային համակարգի քաղաքականությունն մշակողները ՀՀ համապատասխան օրենսդրությունից զատ պետք է քաջատեղյակ լինեն միջազգային առևտրի կարգավորման սկզբունքներին ու առանձնահատկություններին:

«Մաքսային վարչարարություն» մասնագիտացման նպատակներից են՝ պատրաստել անհրաժեշտ վերջնարդյունքներով օժտված բարձրակարգ մասնագետներ, ովքեր ունակ են իրականացնել ՀՀ արտաքին առևտրի քաղաքականության մշակում և իրագործում, առաջարկվող միջոցառումների և փոփոխությունների ազդեցության գնահատում, մաքսային քաղաքականության շուրջ ՀՀ տնտեսության շահերից բխող բանակցությունների վարում՝ մաքսային քաղաքականության կատարելագործման նպատակով կիրառելով միջազգային առաջավոր փորձը: